

ծնած բաժանումներէն զատ, որոնց պատ-
ճառով՝ Աղեքսանդրիոյ եւ Անտիոքի Ա-
թոռներն ալ վաղուց երկճիւղուած էին,
իրենց ցեղաբանական ու մշակութային
գերբաւորումներուն համաձայն, Ղպտի
եւ Ասորի Աթոռներու՝ Բիւզանդակա-
նին դէմ. երբ վրայ կը հասնէր նաեւ
Կ. Պոլսոյ Աթոռին եկեղեցական անջա-
տումը Հռոմէն, նախկին Հնգապետու-
թիւնը կը կորսնցնէր անխուսափելիօրէն
իր հին ու աւանդական իմաստը:

Աւելի ուշ, արեւելեան Կայսրութեան
կործանումով եւ Կ. Պոլսոյ գրաւումով
Թուրքերէն, վերջին հարուածը կը կրէր
Բիւզանդիոնի Աթոռին միասնականու-
թիւնն ալ, մեծ դուռ մը բանալով ազգա-
յին եկեղեցիներու եւ Աթոռներու կազ-
մաւորման, մինչ հետզհետէ նոր Պետու-
թիւններ կու գային ձեւանալ սլաւ աշ-
խարհին մէջ:

113. Պատմաբանական այս արժէքաւոր ուսումնա-
սիրութիւնը նիւթ եղած է՝ աւելի ամփոփ
ձեւով՝ բանախօսութեան մը, զոր Հեղինակը
ներկայացուցած է Ֆրանսերէն, հրաւէրով Ե-
կեղեցապատմական Համաժողովի մը, կազմա-
կերպուած Հռոմի Արեւելագիտական Հաստա-
տութեան Արեւելեան աստուածաբանութեան
Համալսարանի վարչութեան կողմէ (Հռոմ,
26-30 Դեկտեմբեր, 1967), քննութեան առար-
կայ ունենալով «Արեւելի Պատրիարքութիւն-
ները՝ առաջին հազարամեակին»:

Ամատուելի եպիսկոպոսի այս բանախօսու-
թիւնը մեծ հետաքրքրութիւն ստեղծած է
յաւարտ ներկայացումին՝ միջամտած են
Lacko եւ Ortiz de Urbina պատմագէտ աս-
տուածաբանները, խնդրելով կարգ մը լու-
սարանութիւններ՝ Հայոց Աթոռի ինքնավա-
րութեան ծագումին, ինչպէս նաեւ «Կաթողի-

Արեւելի Պատրիարքական հին Աթոռ-
ներուն այս կերպարանաւորութեան շըր-
ջանին էր, ուրեմն, որ Լուսաւորչի Աթո-
ռը կը վերահաստատէր իր եկեղեցական
հաղորդակցութեան կապերը՝ ուղղակի
կերպով՝ Հռոմի Աթոռին հետ, Հնգապե-
տութեան միակ անդամին՝ որ անշարժ կը
մնար, եւ որ կ'անձնաւորէր եւս իր մէջ
Առաքելապետին առանձնաշնորհումները:

Բայց այս գլուխը, ծայր աստիճան
բարդ, ինչպէս նաեւ այն՝ որ կրնայ յայտ-
նարանել դէպքերուն պատճառները, ո-
րոնց հետեւանքով՝ Հայոց Աթոռին եկե-
ղեցական հաղորդակցութեան այս նոր
կապը չունեցաւ իր բաղձալի շարունակու-
թիւնը, բայց եթէ շատ հազուադէպօրէն,
երկրորդ հազարամեակի բովանդակ եր-
կարութեան ընթացքին, արդէն կ'անցնի
ներկայ մեր ուսումնասիրութեան սահ-
մանները¹¹³:

կոս» յորջորջումին մասին. որոնց տրուած
հմտալից պատասխանները ներմուծուած են
ներկայ ուսումնասիրութեան մէջ: Հուսկ՝
Վսեմ. Ծիր. Աղաճանեան, որ կը նախագահէր
օրուան հաւաքովին, շնորհաւորական աղնիւ
արտայայտութիւններով նշած է ներհուն այս
բանախօսութեան արժէքը, եւ գոված՝ Հա-
մաժողովի կազմակերպիչները:

Ուսումնասիրութիւնը լոյս տեսած է Փրան-
սերէն լեզուով, նոյն Համաժողովի դործերու
Ժողովածուին մէջ, «I Patriarcati Orien-
tali nel primo millennio» (Or. Chr. An.
181, էջ 137-178): Ներկայ հայերէն հրատա-
րակութիւնը վերամշակուած է Հեղինակէն,
իմրագրութեան հրաւէրով, որուն համար կը
յայտնենք ջերմ շնորհակալութիւն. (Ծանօթ.
ԽՄԲ.):

ՆՈՐԱԳԻՒՏ ՊԱՐԱԿԱՆՈՆ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

Հրտ. Հ. ՍԱՀԱԿ ձԵՄՁԵՄԵԱՆ

1911ին, էջմիածնի միաբաններէն Սահակ Վրդ. Ամատուելի՝ հմտալից ուսումնասիրութեամբ հրատարակած է հատոր մը «Հին եւ նոր պարականոն կամ անվաներ շարականներ» տիտղոսով, որ կը պարունակէ 270 արժէքաւոր շարականներ, հաւաքուած 70է աւելի ձեռագիր Շարակնոցներէ: Այս մեծարժէք հատորը աչքի առնեմէ: Ս. Ղազարի 100է ընդհանրաւոր, քննեցինք Ս. Ղազարի 100է աւելի ձեռագիր Շարակնոցները, հաւաքելով այն նորագոյն անտիպ շարականները, որոնք դուրս մնացած էին Ամատուելի շարականներէն հատորէն. այսպէս, մեր նիւթ վերոյիշեալ հատորէն. այսպէս, մեր մատենագրութեան մէջ չեն մնար այլեւս մեծ թիւով անտիպ շարականներ. իսկ եթէ յիշենք 1911 թուականէն ետք պարականական կերպով հրատարակուած անվաներ շարականները Հանդէս Ամսօրեայի (1938, էջ 105) եւ Սիոնի մէջ (1941, էջ 74-75. 1947, էջ 385-386, 454-455), որոշ չափով մը կրնանք վստահութիւնն ունենալ թէ այսօր ամբողջութիւն մը ունինք մեր ձեռքերուն մէջ:	Նշան	Ձեռ. քիւ	Թուական
Ներկայ շարականներէն դուրս մնացած են «Կիլիկեան» կոչուած շարականները, դրուած Գրիգոր Անուարդեցիէ, որոնք կը ձեռագրեն առանձին հատոր մը: Այդ շարականներէն 15 1911ին հա-	Բ	943	ԺԳ-ԺԴ դար
	Գ	341	1337
	Դ	1487	ԺԴ դար
	Ե	1046	»
	Զ	525	»
	Է	493	ԺԴ-ԺԵ դար
	Ը	1674	»
	Թ	230	1415
	Ժ	624	1464
	Ի	366	ԺԵ դար
	Լ	249	ԺԶ-ԺԷ դար
	Մ	1341	1640
	Կ	1364	1654
	Ն	131	1657
	Շ	2045	1659
	Չ	655	1664
	Պ	192	ԺԷ դար
	Պ	431	»
	Ռ	1032	»
	Ն	1168	»
	Շ	1234	»
	Ո	433	ԺԸ դար
	Զ	1540	»
	Պ	1441	»
	Ջ	1275	»
	Ռ	773	»

Մեր հաւաքած շարականները երեք տե-
սակի կը բաժնենք.

ա. Պարականոն կրնատ շարականներ:
Սահակ Վրդ. Ամատուելի հրատարա-
կած հատորին մէջ կան կարգ մը շա-
րականներ (էջ 13, 23, 71, 87, 142), ո-

Ահաւասիկ ցանկը Ս. Ղազարի այն ձե-
ռագիր Շարակնոցներուն, որոնք կը պա-
րունակեն պարականոն շարականներ, ի-
րենց համապատասխան նշանատուներով.

րոնք հրատարակուած են անկատար կերպով, որովհետեւ հեղինակը առձեռն ունեցած է կրճատ բնագիրներ, որոնք ինքը ջանացած է կարգաւ եւ բառերը ամբողջացնել. մինչ Ս. Ղազարի ձեռագիրներուն մէջ պահուած են անոնք արդէն իսկ ամբողջական, այսինքն՝ իրենց բնական ընթերցումով: Օրինակեցինք նախ կըր-

ճատ ձեւը, ապա դրինք առաջին սիւնի մէջ Ամատունիի ընթերցումը, երկրորդին մէջ մեր ձեռագիրը՝ իր տարբերակներով:

բ. Տէրունական տօներու պարականոն շարականներ:

գ. Սուրբերու տօներու պարականոն շարականներ:

Ա.

ՊԱՐԱԿԱՆՈՆ ԿՐՃԱՏ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

ՄԵԾԱՅՈՒՍՅԷ ՅԱՐՈՒԹԵԱՆ

2 Ձեռ. ք. 16ա-16բ, Թ. Ձեռ. ք. 25ա:

Սիւն լո. ածա. հրով. վառե. սր ածա. բուրվա. ոսկեղէ. հրո. իջմա. եւ տախտ. ածաղի. դրո. կենդանո. օհ:

Ամպ թեթ. բձղ. ցողո. կենա. ածած. որ յանե. հրեղ. ծովէ. լըցե. վարը. մանր անձրեւ. իմանալի դե. հողեւո. օհ:

Ուրախ լ. լեառն ածաբնա. անկ. մորե. տապա. կը. կի. եւ սալիո. ոսկի. երկ. մանան. տեղ. իջմա. սր ածածին. ահուր:

Ս. Ամատունիի ընթերցում

Ըստ Ս. Ղազարի ձեռագիրներուն

ԱԿ. Սիւն լուսոյ, աստուածային հրով վառեալ, սուրբ Աստուածածին, բուրվառ ոսկեղէն հրոյ Հոգւոյն իջման տեղի եւ տախտակ աստուածաղիծ դրոյն կենդանութեան. օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմք:

Ամպ թեթեւ բարձող ցողոյն կենաց, Աստուածածին, որ յանդական հրեղէն ծովէ լցեալ մանր անձրեւեցեր իմանալի դեղման. հողեւոր օրհնութեամբ:

Ուրախ լեր, լեառն աստուածաբնակ, անկէզ մորենի, տապանակ կտակի եւ սափոր ոսկի երկնային մանանային տեղի իջման, սուրբ Աստուածածին, օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմք:

Սիւն լուսոյ, աստուածային հրով վառեալ, սուրբ Աստուածածին, բուրվառ ոսկեղէն հրով Հոգւոյն իջման¹ եւ տախտակ աստուածաղիծ դրոյն կենդանութեան. օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմք:

Ամպ թեթեւ բարձող² ցողոյն կենաց, սուրբ կոյս Մարիամ, որ յանդէ հրեղէն ծովէն լցար³ վարսս⁴ մանր անձրեւօք իմանալի դեղման հողեւոր. օրհ:

Ուրախ լեր, լեառն աստուածաբնակ, անկէզ մորենի, տապանակ կտակի եւ սափոր ոսկի երկնային մանանային տեղի իջման, սուրբ կոյս Մարիամ. օրհ:

1. իջման] իջեալ Թ.: 2. + եւ բարձող Թ.: 3. լցեալ Թ.: 4. վարսս Թ.:

ՄԵԾԱՅՈՒՍՅԷ ԴԱԻԹԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԵՒ ՅԱԿՈԲԱՅ ԱՌԱՔԵԼՈՅՆ

2 Ձեռ. ք. 28բ:

Յառաջ. դ. ժմկ. կո. ընտ. ցր. հզո. տճ. ա. մովսէ. տու. անկիզ. ա. դէդ. ոչխ. եւ առ. դւ. ի. դըշխ. պանծ. անդդ. երգ. ըզք. միշ. մծ:

Որ ի լրու. փըր. յայտ. ել. ցու. ր. մայ. սըրբ. քանդի ծը. զոր. ծոց. ծի. մեր. բնու. աղամ. եւ ոչ խխտեա. ք. ս. կու:

Հանուրց ստ. օղի. ք. դււ. եւ ամպ թեթ. լո. բաղմ. ո. եւ ի տի. մրմն. առ ի մէ. զիւ. պատ. ածեղ. դրոշ. եա. ի թեւ. հզղէ:

Ս. Ամատունիի ընթերցում

Ըստ Ս. Ղազարի ձեռագիրներուն

ԴԶ. Յառաջադոյն ժամանակաւ կոյս ընտրեցար Հոգեւոր տաճար, առ Մովսէս տունկ անկիզելի, առ Գեղէոյն դեղմն ոչխարի, եւ առ Դաւթի դշխոյ պանծալի. օրհնութեամբ երգով եկեղեցիք տիեղեւոյ այսօր զքեզ մեծացուցանեն:

Որ ի լրումն փրկութեան յայտնեալ ցուցար մայր սրբութեան, քանդի ծնար զորդին ծոցածին մերով բնութեամբ Աղա՛մայ, եւ ոչ խախտեալ քո սուրբ կուսութիւն. [անդադար երգով զքեզ միշտ մեծացուցանեմք]:

Հանուրց ստեղծողին քո գգուեցեր եւ ամպ թեթեւ լուսոյ բաղմեալ, որ եւ ի տիրական մարմին առ ի մէնջ զիւր պատկեր աստուածեղէն դրոշմեալ ի թելադրութենէ Հոգեղինացս. [անդադար երգով զքեզ միշտ մեծացուցանեմք]:

Յառաջադոյն ժամանակաց կոյս ընտրեցար, Հոգւոյն տաճար, առ Մովսէս տունկ անկիզելի, առ Գեղէոյն դեղմն ոչխարի, եւ առ Դաւթի դշխոյ պանծալի. օրհնութեամբ երգով եկեղեցիք տիեղեւոյ այսօր զքեզ մեծացուցանեն:

Որ ի լրումն փրկութեան յայտնեալ ցուցար մայր սրբութեան, քանդի ծնար զորդին ծոցածին մեր ըստ բնութեանս մարդկային, եւ ոչ խախտեալ քո սուրբ կուսութիւնդ. օրհնութեամբ:

Հանուրց ստեղծողին ի քէն դգուեալ եւ յամպ թեթեւ լոյսն բաղմեալ, որ եւ ի տիւ պարմնոյդ առ ի քէն զիւր պատկեր աստուածեղէն դրոշմեալ ի թելս նիւթեղէն. օրհնութեամբ:

ՄԵԾԱՅՈՒՍՅԷ ՍՐԲՈՅ ՔԱՌԱՍՆԻՅ

Թ. Ձեռ. ք. 82ա, 2 Ձեռ. ք. 105բ, Ի Ձեռ. ք. 94ա, Ո Ձեռ. ք. 111բ, 2 Ձեռ. ք. 195բ:

Ուրախ. ածա. խորհր. հօր անե. եւ մա. էակա. բա. հով. ք. ս. հոգ. ի բնա. թ. քու. էակ. այս. ք. մկ. ահ. բան. դք. մի. մեծ:

Մորե. անկ. վառ. հըրո. ածա. ի քէ. յայ. եա. հու. ածա. իջե. ի ծո. սառ. որո. ետո. զպըս. վառ. երա. եա. սըր. քառ:

Իման. ծով դե. նաւ. վա. ի քե. որդ. դըթ. իսկ նա. պետ. բնո. մեր. իջե. իմէ. քոս. որպ. երբ. ւմէ. հն. քաղց. եա. զպաղ. լըճ. այ:

Ս. Ամատունիի ընթերցում

Ըստ Ս. Ղազարի ձեռագիրներում

ԳԶ. Ուրախացիր, Աստուածածին, խորհրդարանի չոր անդին եւ մայր էական Բանին. հովանացեալ քեզ սուրբ Հոգին ի բնակութիւն քում էակցին, այսօր մանկունք օրհնաբանեն. զքեզ միշտ մեծացուցանեն:

Մորենի անկիղելի, վառեալ հրով աստուածային ի քէն յայտնեալ հուր աստուածային, իջեալ ի ծով սառուցելոյն, որով ետուր զպսակ փառաց երանեալ սրբոց քառասնից:

Իմանալի ծով գե... նաւալարեալ ի քեզ Որդիդ գթած, իսկ նաւապետ բնութեանս մերոյ իջեր ի մէջ քառասնից, որպէս երբեմն ի մէջ հնոցին, քաղցրացուցեր զպաղումն լճին. այսօր մանկունք օրհնաբանեն զքեզ միշտ մեծացուցանեն:

Ուրախացիր, Աստուածածին, խորհրդարանի չոր անդին եւ մարմնարան էական Բանին. հովանացեալ քեզ սուրբ Հոգին ի բնակութիւն իւր էակցին³, որով ծնար զՈրդին միածին⁴ այսօր ընդ մանկանցն օրհնաբանից զքեզ միշտ:

Մորենի անկիղելի, վառեալ հրով աստուածային ի քէն յայտնեալ հուրն աստուածային⁵ իջեալ ի մէջ քառասնիկին⁶, որպէս երբեմն ի մէջ հնոցին քաղցրացուցեր⁷ զպաղումն լճին⁸. այս⁹:

Իմանալի ծով գերազանց նաւալարեալ ի քեզ Որդին գթած, իսկ նաւապետն իմանալեաց¹⁰ իջեալ¹¹ ի ծով սառնամանեաց¹², որով¹³ ետուր¹⁴ պսակ¹⁵ փառաց երանելի¹⁶ սրբոց քառասնիցն. այս¹⁷:

1. խորհրդական Ո: 2. բնակութեան Ո: 3. > ի բնակութիւն իւր էակցին 2Ի: 4. > որով ծնար զորդին միածին Ո2: 5. աստուածային] անկիղելի 2Ի: 6. ի քէն... քառասնիկին] որով (որ իսկ 2) ծնար զորդին միածին որ էջն այսօր ի մէջ լճին Ո2: 7. քաղցրացուցեր] եւ եղկեցոյց Ո2: 8. լճին] նորին 2: 9. մէջ քառասնից... լճին այս] ծով սառնամանեաց որով ետուր պսակ փառաց երանելի սրբոց քառասնիցն այսօր. 2Ի: 10. իսկ նաւապետն իմանալեաց] որ նաւապետն է բարեգութ 2: 11. իջեր ի: 12. սառուցեալ 2: 13. > որով 2: 14. որով ետուր] որոց ետուր Ո: ետ 2: 15. զպսակ 2: 16. երանելեաց Ո2: 17. ծով... քառասնիցն այս] մէջ քառասնիկին որպէս երբեմն ի մէջ հնոցին քաղցրացուցեալ (քաղցրացուցեր ի) զպաղումն լճին այսօր 2Ի:

ՄԵԾԱՅՈՒՍՅԷ ՅԱՐՈՒԹԵԱՆ

2 Ձեռ. ք. 122բ, Ը Ձեռ. ք. 103ա:

Տու. տնօ. եւ տաղ. բա. կե. բա. ո. բան. կե. գծ. զղաղ. մեռ. չո. ե. քո. ի թա. ահու. զք. մծ:

Սոսկալի սէր. եւ օթա. սիւն հաս. լու. սէ. ո. զարթ. զսի. եւ նորո. ի քնո. մհ. նո. հրաչ. այս. յր. հաստ. մ. յրո:

Մարի. մայ. պանծ. եւ ք. զերկ. բճրգ. բճե. զբճո. բոլ. եւ հան. ի գի. քո. ն. գթ. յի. ս. եւ արտ. ի գե:

Ս. Ամատունիի ընթերցում

Ըստ Ս. Ղազարի ձեռագիրներում

ԲԶ. Տուն տնօրէնութեան եւ տաղաւար Բանին կենաց բարձրելոյն, որ բանիւ կենադործեաց զՂազարոս մեռեալն չորեք-

Տուն տնօրէնութեան եւ տաղաւար Բանին կենաց Բանն որ բանիւ կենադործեաց զՂազար մեռեալ չորեքօրեայն ի թաղմա-

Ս. Ամատունիի ընթերցում

Ըստ Ս. Ղազարի ձեռագիրներում

օրեայ ի թաղմանէ. օրհնութեամբ զքեզ մեծացուց:

Սոսկալի սէր եւ օթարան, սիւն հաստաութեան լուսոյ (սէ.) որ զարթուցեր զսիրելին (քո) եւ նորոգեցեր ի քնոյ մահուանէ նորահրաչ...:

Մարիամ, մայր պանծալի եւ քան զերկինս բարձրագոյն. (որ) բարձեր զբարձողն բոլորից եւ հանգուցեր ի գիրկս ձոյն...:

նէ¹. օրհնութեամբ զքեզ² մեծացուցանեմք:

Սոսկալի սերովբէից եւ օթեան³ անձառ լուսոյն⁴, սէր որ զարթոյց զսիրելին⁵ եւ նորոգեաց ի քնոյ մահուանէ նորահրաչ այսմ յարութեամբ հաստատեաց զմեզ յարութիւն. օրհնութեամբ:

Մարիամ, մայր պանծալի⁶ եւ քան զերկինս բարձրագոյն, բարձեր զբարձողն բոլորից եւ հանգուցեր ի գիրկս քո, նա զթացաւ⁷ յիւր սիրելին եւ արտասուեաց առ զերեզմանն, Մարթայեացն խրախացեալ զծնող բանին Տեառն Աստուծոյ⁸. օրհն:

1. + թաղմանէ մարիամ մայր ցանկալի եւ քան զերկինս բարձրագոյն Ը: 2. + երգով զքեզ Ը: 3. աթարան Ը: 4. լուսոյն] սիրոյն Ը: 5. > զսիրելին Ը: 6. պանծալի] ցանկալի Ը: 7. գթալեալ Ը: 8. > տեառն աստուծոյ Ը:

ՄԵԾԱՅՈՒՍՅԷ ՅԱՐՈՒՍՅԷ ՄԵԾԱՅՈՒՍՅԷ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Թ Ձեռ. ք. 231բ:

Տաճա. լու. մար. ծղմա. յոաջ. քն. զար. ո. ծնա. մմվ. առ քէ. զանտա. եւ զանե. ի գիր. ք. գգլ. զսոսկ. եւ զահ. երգո. ձա. ցն. զք. միչ. մծ: Սափո. ոսկ. մա. հացի. յերկ. իջե. ո. կեա. տ. աչխ. ի քոան. սեղա. զկենդա. ար. զմար. եւ ս. զարի. ահւ: Կուսի. պար. մա. կոյ. անար. տիրամա. նախ. տեսա. զուչ. առաք. քարո. հայր. զաւա. մարտի. վկայ. եր:

Ս. Ամատունիի ընթերցում

Ըստ Ս. Ղազարի ձեռագիրներում

ԳԶ. Տաճար լուսոյ, Մարիամ, ծաղմամբ յառաջ քան զարուսեակ, որ ծնար մարմնով առ ի քէն զանտանելին եւ զաներեւոյթն ի գիրկս քո զգուցեցեր զսոսկալին եւ զահաւորն. երգով ձայնիւ ցնծութեամբ զքեզ միշտ մեծացուցանեմք:

Սափոր ոսկի մանանայ հացի յերկնից որ կեանս տայ աչխարհի ի քառանկիւն սեղանոյ զկենդանարար զմարմին եւ սուրբ զարիւն, օրհնութեամբ երգով զքեզ միշտ մեծացուցանեմք:

Տաճար լուսոյ Մարիամ ծաղմանն յառաջ քան զարեւ ծնար մարմնով առ ի քէն զսոսկալին եւ զանեղն ի գիրկս քո զգուցեցեր զանտանելին եւ զահեղն. երգով ձայնիւ ցնծութեամբ զքեզ միշտ մեծացուցանեմք:

Սափոր ոսկի Մարիամ հացին յերկնից իջելոյ որ կեանս տայ աչխարհի ի քառանկիւն սեղանի զկենդանարար զմարմինն եւ սուրբ զարիւնն ահաղին. երգով:

Ս. Ամատունիի ընթերցում

Ըստ Ս. Ղազարի ձեռագիրներում

Կուսից պարծանք, մայր կոյս անարատ
տիրամայր, նախատեսացն զուշակեալ,
առաքելոցն քարոզողաց, հայրապետաց
զաւանդաց, մարտիրոսաց վկայիցն. եր-
զով ձայնիւ ցնծութեամբ զքեզ միշտ մե-
ծացուցանեմք:

Կուսից պարծանք, Մարիամ կոյս անա-
րատ տիրամայր որ տեսողացն ցուցար ա-
ռաքելոցն տեսիլ, մարտիրոսաց վկայեալ,
հայրապետաց զաւանդեալ, երզով:

Բ.

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՏՕՆԵՐՈՒ ՊԱՐԱԿԱՆՈՆ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

ԱԻԵՏՄԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Դ. Ձեռ. քղ. 15ա-15բ: Սկզբնա-
տառերը կը կազմեն ԿԻՐԱԿՈՍ:

Կ. մարմնացելոյն զոր յառաջ զուշակելով, այսօր ի քէն ծնեալ
մարմնով, առ նա միշտ բ(արեւիսօտեա վասն անձանց մերոց):

Ի յԱննայէ բղխեալ ծաղիկ անուշահոտ, նոր բուրաստան զովացուցիչ,
պտղովն ի քէն ուրախարար որդւոց մարդկան որք յԱդամայ. առ:
Բենատեսին Իսրայելի նահապետին մեծին Յակոբայ բանն լցաւ որ ի
Յուդայ ի կորիւն առիւծուն յեմմանուէլն որ ի քէն ծնաւ. առ նա միշտ:

Աւետեօք քո զուարճացաւ մեծն Յովակիմ հայրն քո ըստ մարմնոյ, զի
ի նմանէ լոյս յայտնեցար խաւարելոցն որք ի բանտին, օրհնութեամբ զքեզ
մեծացուցանեմք:

Կենդանարարդ համայնից, ուրախարար որդւոց Ադամայ, քանզի ըզ-
պատրանն որ յեւայէ լուծեր ծննդեամբ որ ի .. մարմնով, օրհնութեամբ:
Ով դու քաղաքդ կենդանի տաճար շինեալ ի յԱստուծոյ բարունւոյն մեր
Յիսուսի ծնող եղեր մարմնով յերկրի. առ նա միշտ:

Սկիզբն էաւ լինելութեանց ի սկզբնէ Բանն Աստուած, ի կուսէդ զդե-
ցեալ մարմին ի յանարատ յորովայնէ. օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմք:

Ծանօթ. Այս չարականին խորագիրը, ինչպէս նաեւ տառիւն տողը, ջնջուած են կամաւոր կեր-
պով:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Ա. ԱԻՈՒՐ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

Յաւելուածս ամբողջութեամբ ունի ձ' Ձեռ. քղ. 20ա. յաջորդ
ձեռագիրները ունին մէկ կամ աւելի տունք, հետեւեալ կերպով. Ը
Ձեռ. քղ. 7բ. «Եղար...», Ի Ձեռ. քղ. 1բ. «Եղար...», Խ Ձեռ. քղ.
2ա. «Մեղքոն... Եղար...», Կ Ձեռ. քղ. 16ա. «Մեղքոն...», Զ Ձեռ.
քղ. 13ա. «Խանձարրօք... Եղար...», Մ Ձեռ. քղ. 6բ. «Եղար...
Մեղքոն...», Յ Ձեռ. քղ. 15բ. «Եղար... Մեղքոն...», Ն Ձեռ. քղ.
6ա. «Մեղքոն... Գնացին... Առիւծն...», Շ Ձեռ. քղ. 88ա. «Եղար...
Մեղքոն... Բերին... Իննամեան... Հրեշտակ... Հայր...»:

Դի. Ի Հօրէ ծագեցար: Ծնար ի յայրին: Հովուաց յայտնեցար: Եւ մեք
երգեսցուք:
Եղար ի մսուր խոստովանեալ թաղաւոր, արդարութեան արեգակն, Տէր,
փառք քեզ:

Մեղքոն, Գասպար, Պաղտատար տեսին զՅիսուս նորածնեալ. արդ:
Բերեալ պատարագ ոսկի, կնդրուկ եւ զմուռս. արդ:
Գնացին յԵղիպտոս նղովեցին զԱրիոս. արդար:
Առիւծն դռէր ցնծայր քաղաքն Երուսաղէմ. արդար:
Իննամեանն ճանապարհի եւ նա օղնէր միաբան. արդ:
Հրեշտակ վայր իջեալ աղաղակէր ասելով փառք ի բարձունս Աստուծոյ.
Հայր Աստուած յերկնից վկայեալ սա է Որդի իմ սիրելի. արդ: [արդ:
Խանձարրօք պատեցար եւ որ նստէիրդ ի քրովբէս. արդ:
Սարկաւազունքս ամենայն օրհնեմք զԱստուած միաբան. արդարութեան:

ՄԵԾԱՑՈՒՍՅԷ ՄԵԾԻ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻՆ

Բ Ձեռ. քղ. 93ա, Ծ Ձեռ. քղ. 87ա-87բ:

ԲԶ. Անճառ բանին Հօր բնակարան, կենաց հացին տուն¹ սրբութեան,
որ զնախամօրն ճաշակման դառն պտղոյն պարտեաց մահուան, ի քէն պտղովն
անմահութեան քաղցրացուցեր ազգի մարդկան. հայցեա յորդւոյ քում² միած-
նին քաւիչ լինել ծննդոց նորին:

Որ ի պատկեր Հօրն անեղին, ստեղծեալ եղեւ Ադամն հին, պատմուճա-
նաւ եղ ի դրախտին՝ զոր մերկացաւ խաբամբ չարին. իսկ նոր Ադամն ի քէն
կրկին զդեցոյց շնորհօք յաւազանին. հայցեա:

Որ անմարմին քերովբէիւք յետ պատրանացն կողածնին, եղեալ փա-
կանս կենաց ծառոյն անհուպ լինել նախաստեղծին, իսկ մարմնաւոր սերով-
բէիւք³ ծնունդն երաց զնոյն վերստին. հայցեա:

1. տունի Ծ: 2. յորդւոյ քո Ծ: 3. սերովբէից Ծ:

ՄԵԾԻ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ ՀԱՐՑ

«Ի Ծերեկց Գրիգոր վարդապետէ ասացեալ»

Ժ Զեռ. ք. 376բ-377ա, սկզբնա-
տառերը կը կազմեն Գրիգոր:Գովեստ հրճուանաց արարչիդ հանուրց աղագց հրամայեցեր բանիւ կե-
նաց բղխեալ ի ջրոցս օղնականաց. զքեզ օրհնեմք, Աստուած, հարցն մերոց:Բարուն գիտութեան, միածին Որդի եւ Բան, աղատեցեր զաղզն Յակովի-
բեան յեղիպտացոցն գերութեան, զքեզ օրհնեմք Աստուած:Իսկակիցդ Հօր եղեալ մարդ որդի կոյս մօր տնօրինաբար ի յերկրի շըր-
ջեալ եւ զառաքեալսն աշակերտեալ. զքեզ օրհնեմք Աստուած:

ԶՏէր օրհնեցէք, բարձր արարէք զնա յաւիտեան:

Գրով զօրէնս աւանդեալ այսօր զնոյն յանձն առեալ մարմնով կատար-
եալ. բարձր:Ոտիցս ուսոյց լուանալ, գործով զնոյն կատարեալ եւ մեզ աւանդեալ.
բարձր:Բամից սրբոցն իւր ընտրեալ, զհացն ի մարմին կեր տուեալ, նոր ուխտ
անուանեալ. բարձր:

ՄԱՆԿՈՒՆԻ ՄԵԾԻ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Ը Զեռ. ք. 119բ, իսկ միայն վերջին
տառերը ունի Ճ Զեռ. ք. 310բ:Ա. Այսօր կանգնեցաւ: Այսօր Տէրն մեր: Մի ոմն: Զայն լուեալ: Բանն
զոր:

Այսօր Տէրն մեր մտանէ յերուսաղէմ եւ դայ կամաւ ի չարչարանս:

Զայն լուեալ Յուդայի նենդութեամբ հարցանէր, միթէ ե՞ս եմ, վար-
դապետ:Առեալ զպատանն եւ արտաքս, մերկացաւ զսուրբ Հօգին եւ զգեցաւ
զսատանայ:Սուգ եւ տրտմութիւն եղեւ ի դասս առաքելոցն, զոր որոշեաց Տէր
պատառաւն, եւ եւ արտաքս ի սուրբ գնդէն:

ՄԵԾԱՑՈՒՍՑԷ ՄԵԾԻ ՈՒՐԲԱԹՈՒ

Ը Զեռ. ք. 128ա-128բ:

Հաստատարոյս ներգործութեամբ մեզ փայտ բուսեալ զտունին առ յեր-
կրէ սեռին քաղցրապտուղ յայգւոյն ի հրոյ աստուածութեանդ, այսօր խա-
չակցիմք մարդ զոյով Յիսուս:

Ունակացեալ առ էակաց սաւառնեալ սրովրէաթոռք առ էակաց փըրկ-

չարար լուծեալ արքայ արա (sic) ի բնութեանս կողահոսաւ, մշտագրեալ
յԱստուած զթողութիւն մարդ զոյով, Յիսուս:Սոսկացեալ սերովրէիւք սկիզբն եղեալ սեղան սարտուցելոյս իմացեալ
մարմին յանմարմնական հոգւոյն տուչմանց ցանկամք վերստին տօնել քեզ
Յիսուս:Մտակրեալ յուրբաթ արեամբս ի գին գրեալ զաղգս մարդկան երկրի
պար առեալ երկնայինքն եկեալ ընդ քեզ ի սպաս առ խաչին, տօնեալ վերստին
Բարսղիւ զՏէր Յիսուս:

ՇԱՐԱԿԱՆ ԶԱՐԶԱՐԱՆԱՅ

Դ Զեռ. ք. 158ա, Հ Զեռ. ք. 173բ:

Թաղմանն Տեառն սկսանին զ«Ամբիծ»ն շարականաւ.

Բ. Երանեմք զչարչարանս քո Բան եւ փառաւորեմք զհանգչելդ քո ի
գերեզման¹, զոր վասն մեր համբերեցեր Աստուած:Բաժին իմ ես դու Տէր: Արժանապէս պատկառելի է հրեշտակացն² խըմ-
բից, տարածիլ³ քո Քրիստոս Աստուած ի վերայ խաչին:Արարիչ իրաւանց: Զքեզ արարիչդ եւ ստեղծիչդ որ չարչարեցար մարմ-
նով վասն մեր, դասք հրեշտակաց եւ մարդկան երկրիւղիւ փառաւորեն:

1. գերեզմանի Հ: 2. հրեշտակն Հ: 3. գտարածելն Հ:

ՄԵԾԱՑՈՒՍՑԷՔ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ

Ը Զեռ. ք. 27բ-28ա:

Գ. Նոր արեւելք զուռն արեւու ընդ որ եմուտ լոյսն ի բնութիւնս տէր,
այսօր եւ տարածեալ լոյսն արեւակն ի քէն փակեալ պահեաց զկուսութիւնդ
անլոյծ, վասն որոյ Աստուածածին զքեզ երանեալ մեծացուցանեմք:Լեառն Թեման վիմին հատմանս էիր յոր Սինայի օրէնսդիրն եկեալ ի
քէն տէր մեզ երեւեցաւ երեւելի մարմնով հրեշտակք յաջմէ մեզ աւետող ծը-
նունդ. վասն:Մերով փշարեր տկար բնութեամբ կոյս մորենի ի հրոյն անկէզ կացեր
ամպ թեթեւ զճառագայթս իւր ծածկեաց տէրն քեւ ծննդեամբ եկեալ լոյս
աշխարհիս խաւարեալ. վասն որոյ:

* * *

Գ Զեռ. ք. 319բ:

Ստ. Աստուածածին Մարիամ, որ զկեանքն եւ զյարութիւն ընդհանուր
աղղի մարդկան ի տաղաւար քո սրբութեան, անապական մարմնով զնա ըն-
կալար, բարեխօս զքեզ ունիմք առ որդիդ քո միածին, զի շնորհեցէ մեզ թո-
ղութիւն յանցանաց:

Երանեալ տիրամայր որ զհամայնից բարձուն էից բարձեր ի զիրկս քո մարմնով, և կաթնասուն եղեալ ի քէն փրկիչն Յիսուս կերակրեցաւ. բարեխօս:

Սոսկալիդ սերովբէից որ տաճար եղեր Բանին եւ օթեւան Հօր եւ սուրբ Հոգւոյն, եւ վեհադոյն քո կուսութեամբդ երանեցար ի բոլոր ազանց, բարեխօս զքեզ ունիմք առ որդիդ քո միածին զի փրկեսցէ զմեզ ի հրոյն տանջանաց:

* * *

Ղ Զեռ. քղ. 18ա:

Բկ. Երանեմք զքեզ Աստուածածին որ երանեցար ի բոլոր ազգաց եւ ազանց երկրի:

Ուրախ լեր բերկրեալ Տէր ընդ քեզ, որ ուրախութիւնդ ես երկնի եւ երկրի:

Հոգին սուրբ եկեսցէ ի քեզ եւ զօրութիւն Բարձրելոյն ի վերայ քո հովանացի:

* * *

Ձ Զեռ. քղ. 196բ, Ո Զեռ. քղ. 119բ:

ԲԶ. Որ զբանն Աստուած յորովայնի քում ընկալար եւ ծնար զնա մարմնով Աստուածածին. օրհնութեամբ¹ զքեզ մեծացուցանեմք:

Որ զհուրն Աստուած մարմնով ի զիրկս քո բարձեր, մորենի անկիղելի, տիրամայր Աստուածածին. օրհնութեամբ:

Որ զհացն կենաց քաղցեալ բնութեանս շնորհեցեր եւ նստելոցս² ի խաւարի զլոյս ծագեցեր, Աստուածածին. օրհնութեամբ³:

1. + օրհնութեամբ երգով Ո: 2. նստելոց Ո: 3. + օրհնութեամբ երգով զքեզ մեծացուցանեմք Ո:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Ա. ԱԻՈՒՐ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ

Ը Զեռ. քղ. 169բ. ունիմ միայն վերջին տունը՝
Բ Զեռ. 151բ, Ձ Զեռ. քղ. 190բ, Ճ Զեռ. քղ. 165բ:

ԴԶ. Կենդանարար Աստուած: Զուարճացան քո զալստեամբ: Հոգեւորական սուրբ:

Որ անձրեւածին ցօղովն արբուցեր զընտրեալսն եւ զբաժակն ուրախարար մատուակեցեր ի սուրբ առաքեալսն. վասն որոյ եւ մեք տօնեմք զդալուստ քո սուրբ:

Մտին առաքեալքն ի սուրբ վերնատունն, առին հրաման ի սուրբ Հոգւոյն, լուսաւորեցին զաշխարհս ամենայն. վասն:

Դարձեալ զարձուցին զտիեզերս հրաւիրմամբ Հոգւոյն սրբոյ, վարատելով զխաւար մեզաց աշխարհի. վասն:

Բաժակն որ արբին ի սուրբ վերնատունն, որք արբին կենդանացան խօսէին յայլ եւ յայլ լեզուս. վասն որոյ եւ մեք այսօր տօ:

ՄԵԾԱՅՈՒՍՅԷ Ե. ԱԻՈՒՐ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ

Ռ Զեռ. քղ. 33բ², Ո Զեռ. քղ. 75ա, Պ Զեռ. քղ. 36բ:

Բկ. Հոգմն Հոգւոյն, Աստուածածին, շնչէ ի քեզ այսօր կրկնակի, զի որ ի նախնումն¹ եղեր Բանին ընդունող, լիցիս յերկրորդումս զործակալաց նորին յանձանձող, վասն որոյ զքեզ ո՛վ ամպ թեթեւ մեծացուցանեմք:

Զի զբանն յղացեալ եւ զծնեալն ի քէն քաջապէս դու² քարոզէիր³, այսօր Հոգին հրալեզուածեւ հանգեաւ ի քեզ, որ բորբոքեալ⁴ սիրով կայիր յաղօթս ի սուրբ վերնատունն, վասն որոյ զքեզ անկէջ մորենի մեծացուցանեմք:

Լի անդատին շնորհիւ Հոգւոյն եւ յաւետման ժամանէիր⁵, նոյն եւ այսօր վերազդանի ի քեզ, զի առատածեռնեացես զայն ապաւինելոց ի խնամս քոյին. վասն որոյ զքեզ օթեւան շնորհաց մեծացուցանեմք:

1. նախնումն ՈՊ: 2. > դու Ո: 3. քարոզեցէիր Ո: 4. բորբոքեցեալ Ո: 5. ժամէն էիր Պ:

ՄԵԾԱՅՈՒՍՅԷ Է. ԱԻՈՒՐ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ

Ռ Զեռ. քղ. 33բ², Ո Զեռ. քղ. 75բ, Պ Զեռ. քղ. 37բ:

ԳԶ. Անուր աներբն սուրբ Հոգի ի վերնատունն այսօր վերադայի եւ զսուրբ կոյսդ հրազինէ¹ նորոգ ձրիւ, որ զհուրն Աստուած իսկ վաղ ուրեմն կրեցեր լրիւ, մաքրել մեզ մաղթեա, ով մայր զթալի:

Մին Հոգի նոյնաորակ լեզուածեւ յոգնաթիւ երեւեալ նախ հանդեաւ ի քեզ, զի միացուցէ զոգիս ժողովելոցն² անդէն քեւ, որ ծնար զմիացուցիչն քեզ, զի միացուցէ զոգիս ժողովելոցն³, միացո զմեզ ընդ քեզ, ով մայր զթալի:

Վարդապետ առաքելոցն սրբոց եղեր փոխանակ ծնեցելոյդ որդւոյ, լեր եւ մեզ զառածելոցս տղիտութեամբ՝ մարդիչ քաջաջան, զի կեցեալք իմաստայեղձ վարուք, լիցուք արժանի որդւոյդ յետ մահուան երանատեսութեան քեւ մարդդ զթալեալ:

1. հրազինեա Ո: 2. ժողովելոցն ՈՊ: 3. բաժանեցելոյ Պ:

Է. ԱԻՈՒՐ ՍՐԲՈՅ ԽԱԶԻ

Բ Զեռ. քղ. 197ա-197բ:

ԴԶ. տ. Յոյս եւ ապաւէն ետուր զխաչ քո մեզ, Քրիստոս, կնիք հաստատութեան եւ պարծանք սուրբ Եկեղեցւոյ. վասն որոյ խնայեա ի մեզ, Քրիստոս, կամաւոր քո խաչելութեամբն:

Որ բեւեռեցար ի խաչին վասն յանցանաց նախաստեղծին, եւ անապաւկան արեամբդ քո լուսաւորեցեր զազգս որդւոց մարդկան. վասն որոյ:

ՁՏԷՐ օրհնեցէք, բարձր արարէք զնա յաւիտեան:

Որ ընտրեաց զերանելի առաքեալսն ի պատիւ աստուածային քարոզութեան. բարձր:

Որ սոքօք լուսաւորեաց զարարածս, որք ընդհանուր ընթացեալ քարոզեցին ընդ տիեզերս. բարձր:

Ո. Պարգեւք երկնային շնորհեցեր մեզ Տէր սուրբ առաքելովք. աղաչանօք սոցա ողորմեա:

Ի լոյս ճշմարիտ աստուածգիտութեան կոչեցեր սոքօք զտիեզերս. աղա:

Որ շնորհօք սուրբ Հոգւոյն լուսաւորեցին զտիեզերս ամենայն առաքեալք եւ վկայք քո Քրիստոս. աղաչ:

Ս. Հաստատուն յուսով քո, Տէր, զօրացեալ եղեն ի սէր աստուածութեանդ քո երանելի սուրբ առաքեալքն, որք հեղին սուրբ զարիւնս իւրեանց վասն անուանդ քում սրբոյ, եւ եղեն քեզ ճշմարիտ վկայք:

Ընթացեալք ընդ տիեզերս հրաւիրեցին զազգս յանսպառ եւ յանվախճան ուրախութիւնն. որք հեղին:

Անաչառ դատաստանին դատաւորք եւ դատապարտեալք զապստամբեալքն ի ճշմարիտ քարոզութենէն. որք հեղին:

Մկ. ԳՂ. Սիրեցին զքեզ, Տէր զօրութեանց, յաղթող սուրբ առաքեալքն առաքինասէր եւ բարեհաճոյ դործովք. սոքօք խնայեա ի մեզ այժմ եւ ի քո միւսանդամ գալստեանդ եւ քեզ փառք յամենայն սրբոց:

Լուսաւորեալք ի Հոգւոյն սրբոյ, լուսաւորեցին զազգս ամենայն լուսով գիտութեան սուրբ Երրորդութեանդ. սոքօք խնայեա:

Տիեզերաց եղեն պարծանք եւ յոյս հաւատացելոց, եւ հեղմամբ արեանն իւրեանց պսակեալք եղեն սքանչելի փառօք. սոքօք:

ՇԱՐԱԿԱՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԿՐՏՁԻ

Ճ Զեռ. քղ. 318ա-բ. սկզբնատառերը կը կազմեն Յոհանէս:

ԱԿ. Յաստուածորդւոյն ի ծնունդ կանանց մեծ վկայեալ, մարդարէիցն զերագոյն, որ եղեր արուսեակ արեգականն արդարութեան, հաւ զարթուցիչ ի քնոյ եւ ճրագ լուսոյ խոր գիշերի. վասն որոյ հայցեմք ի քէն, բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց:

Ով սքանչելի մեծ խորհրդոյս, որ յօրինակ բնութեանս յորմէ Աստուած ծնաւ ի յամլոյն Սառայէ Իսահակ, եւ յեղիսաբեթէ սուրբ Յովհաննէս ծնար եւ հրեշտակական կրօնիւք յանապատի անմարմնաբար սնար. վասն որոյ:

Հրաշալի մեծագոյն խորհուրդ, որ հրեղէն բնութեամբ զհուր Աստուած մկրտեցեր ի ջուր եւ զօրինացն բացեալ զդուռն զաստուածատուր զշնորհսն աւանդեցեր տուողին, քահանայ եւ մարգարէ, եւ զթաղաւորն ճշմարիտ յայտնեալ. վասն:

Արքային հրեղինաց դասուց բարեկամ եւ հրաւիրակ հարսանեացն եղեր, որ ի ջուրն Յորդանանու կազմեցեր հանդերձ եկեղեցւոյ հարսին, զի զմկրտեալն ի քէն-Քրիստոս զգեցցին ծննդեամբ աւազանին. վասն որոյ:

Նոր խորհրդոյ անճառ Բանին քարոզ՝ որ զարարիչն Աստուած ի կերպն Աղամայ տեսեալ վկայեցեր աղաղակելով, ահա գառն Աստուծոյ որ բառնայ զմեզս աշխարհի, որ ի ստուերական գառինսն օրինակեալ ցուցաւ. վասն որոյ:

Էական Բանին ձայն գոչման՝ որ զբարձողին զմեզս աշխարհի դուշակեցեր զշնորհս քարոզել ապաշխարութիւն եւ թողութիւն մեղաց խոստովանողաց եւ տապաւառ սրոյ սպառնացար անպտղաբեր ծառոցն. վասն որոյ:

Սարսեալ դողան արարածոց բնութիւնք, զի յիմաստուն բանին զեղատուէ Հերովդէս եւ Հերովդիսիայ, նման օձի իժի եւ քարբի խցին զականջս իւրեանց յանգիմանութեան հարեալ նետիւ յանօրէն զինարբուսն հատին ըզիւր ի մարդարէիդ մեծի, վասն որոյ հայցեմք ի քէն, բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց:

ՄԵԾԱՅՈՒՍՅԷ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԿՐՏՁԻ

Զ Զեռ. քղ. 205բ:

ԳԶ. Ուրախացիր, Աստուածածին, տաճար լուսոյ անստուերի, որ աւետեօքն Գարբիելի ծնար զՈրդին Հօր ծոցածին, որով յանցանք նախաստեղծին ջնջին ի սպառ ծննդեամբ քոյին. հոգեւոր երգով զմայրդ Աստուծոյ մեծացուցանեմք:

Որ զծերացեալ ամուլ արդանդն օրինակ էր սրբոյ կուսին, որ յղացաւ զքարոզ կենդանին զլուեալ ողջոյն Մարիամու երկրպագեալ կենարարին ի յորովայն սրբոյ կուսին. հոգեւոր երգով:

Որ մեծ ի ծնունդս կանանց սուրբ Յովհաննէս քարոզ կենաց, զծնեալն ի քէն զՈրդին ծոցածին մկրտելով ի Յորդանան եւ զհամագոյ Երրորդութիւնն յայտնեալ բնութեան ազգի մարդկան. հոգեւոր:

ՇԱՐԱԿԱՆ ՍՐԲՈՅՆ ԹԱԴԷՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

Ե Զեռ. քղ. 144ա: Սկզբնատառերը կը կազմեն Սարգիս էր:

ԴԶ. ստ. Սրովբէագունդ ջահից անտես, յանեղական Հօրէ անեղ ծաղումն անճառ Բանն որ միշտ յառաջ քան զյաւիտեանս, խորանաձեւ շրջափակեալ զառաքելոյն Թագէտի ճառագայթեալ լոյսն Հայաստանեայց:

Առաւօտու լոյս ի Հօրէ անհատաբար շարժեալ յառաջ ի սկզբանէ ճառագայթ արփիափայլ տարփումն անճառ պարունաձեւ արտափայլեալ զառաքելոյն Թագ:

Բախճանական լոյս որ ծագեաց անեղապէս յեղաշարժեալ ի մահ խաչին, թագաւորն որ ի կուսէ ծնեալ արքայ լոյս ի լուսոյ հնչեալ առաքելոյն Թագ:

Գերահրաշ բան եւ ծագումն արփիափայլ ճառագայթեալ մերունայեղ լոյսն որ հրաբորբօք հնչեալ յերկնից ջահափայլեալ պարունական զառաքելոյն Թագ:

Իսկ նա հրաշափայլ ծաղմամբ պայծառացեալ գովեստ մեծի ներբողական առաքեալ քարոզ անճառ մեծ խորհրդոյն ականատես խաչեցելոյն նախաստեղծ կերպիւն. չօչափելով զԲանն որ ի մարմնի:

Սրովբէական Բանին պատմող տեսեալ զլոյսն ի սկզբանէ մարմնով յերկրի, սէրն որ առ Աստուած հարեալ յաւէտ արբեալ զբաժակ զողջութեան սրբոյն Թաղէոսի. չօչափելով:

Էին անեղ Բանին աթոռ զնշան յուսոյ ձեւաբերեալ առաքելոյն ախոյեան կանդնեալ յաղթող անպարտելի, զէն անրթելի, զսրեալն արեամբ էին զմեծ քառաթեւն հարկանելոյ զբանակեալն յեղիպտոս:

Բարունելոյ կամաց միոյ զփառս բանից տասանց յաւէտ եղանակեմք այժմ եւ յապագայն յաւիտենից, արժանապէս ըմպել զուրախարարն յիշատակաւ սրբոյն Թաղէոսի հաղորդելով լուսոյն անսպառ:

ՇԱՐԱԿԱՆՔ ՍՐԲՈՅՆ ԹՈՎՄԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

Թ. Ձեռ. ք. 6բ, Ո Ձեռ. ք. 59բ, Չ Ձեռ. ք. 184բ,
Պ Ձեռ. ք. 31բ, Զ Ձեռ. ք. 55ա:

ԳՁ. մ. Աստուածածին, խորան լուսոյ, անճառ բանին բարձրելոյ, որ¹ ի ձեռն չնորհաց Հոգւոյն² սրբոյ կոչեցեր զԹովմաս ի Հնդկաց ի փոխումն քո յերկնային կայանս:

Աշտանակ ոսկի եւ սափոր լցեալ երկնային մանանայիւն³, որ յայտնեցար⁴ քարոզութեամբ սրբոյն Թովմայի, ազատեալ զմեղ ի կապանաց մեղաց:

Լեռն վիմածին որոյ մարդարէից բանքն քեւ կատարեալ եւ սիրով որդւոյ քո լցեալ զթերահաւատութիւն սրբոյն Թովմայի. բարեխօսեալ առ Տէր վասն անճանց մերոց:

1. յոր 2: 2. ուսոյն ՈՁ: 3. մանանային ՉՁ: 4. յայտնեցեր Ո:

* * *

Թ. Ձեռ. ք. 46բ:

ԳՁ. ճշ. Թովմա սուրբ առաքեալ թաղաւորին թաղաւորաց խաչակից եւ վկայ եւ քարոզող բանին կենաց. բարեխօս լեր վասն մեր փրկել զմեղ ի տանջանաց:

Որ էն Աստուած քաղցր ձայնիւ եցոյց մատամբ զխոյ կողին, ասէ, Թովմա, մի՛ լինիր թերի, այլ հաւատա՛ւ բոլոր սրտիւ. բարեխօս:

Խթեալ մատամբ ի կող կենաց, յորմէ զողան դասք հրեշտակաց, եւ ի տեղի բեւեռացն ուստի արիւն եւ ջուր բղխեաց. բարեխօս:

Չմարդարէիցն ցանկալի մարմնով տեսեալ չօչափեցեր եւ զանտեսն ի յէից տիեզերացս ծանուցեր. բարեխօս:

Մարմնացեալ Բանն Աստուած զքեզ ի Հնդկիս հրաւիրեաց, ընդ երեսուն զահեկանի Արբանէսի զքեզ վաճառեաց. բարեխօս:

ՀԲ. ԱՇԱԿԵՐՏԱՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Յաւելուած շարականը ունիմ հետեւեալ ձեռագիրները.
Թ. Ձեռ. ք. 45բ, Զ Ձեռ. ք. 40բ, Ը Ձեռ. ք. 49բ,
Ի Ձեռ. ք. 51բ, Դ Ձեռ. ք. 225ա, Ժ Ձեռ. ք. 53բ:

Դ. Կ. մկ. ստ. Առաքեալք Աստուծոյ: Բարեկամք Քրիստոսի: Գերագոյն քան:

Դասք անմարմնոց հրեշտակաց¹ քեզ երանեն, ամէնօրհնեալ կոյս Մարիամ, որ² զէակից բանն որ ընդ Հօր կրեցեր ի քեզ³ անսերմնապէս. բարեխօսեալ առ Տէր վասն մերոյ փրկութեան⁴:

1. հրեշտակաց] հրեղինաց 2: 2. որք ի: 3. ~ ի քեզ կրեցեր ԸԴ: 4. բարեխօսեալ... փրկութեան] առ նա միշտ բարեխօսեալ վասն քաւութեան մեղաց մերոց Դ:

ՄԵԾԱՑՈՒՍՑԷՔ ՍՐԲՈՅՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ

Զ Ձեռ. ք. 31ա:

ԳՁ. մ. Այսօր երկնային լուսոյն շտեմարան եւ առադաստ անճառ Բանին ծովէն զանձրեւ անմահութեան արբուցանելով զծարաւեալ ողիս մարդկային ի ջրոյն կենաց անմահութեան, ազաւեմք զքեզ, մայր եւ կոյս, բարեխօսեալ առ որդիդ քո միածին:

Որ փոխանակ հին օրինին բորբոքեալ քեզ հուրն աստուածային զոր ետեսա Մովսէս զօրինակ կուսին ի Սինայ լերին զմորենին վառեալ հրովն աստուածային, այսօր սրբոյն Ստեփանոսի տեսեալ ընդ աջմէ Հօր զծնեալն ի քէն զորդին միածին. ազաւեմք:

Որ զլոյսն երկնային ծաղեցեր մարդկան, սուրբ կոյս Մարիամ, որով ծաղեցաւ յողիս սրբոյն Ստեփանոսի արփիական լոյսն արդարութեան, թո՛ւ զուրեւն խնդրելով մարմնացելոյդ առ ի քէն անօրէն քարածղողացն. ազաւեմք:

* * *

Թ. Ձեռ. ք. 34ա, Ո Ձեռ. ք. 120ա, Զ Ձեռ. ք. 194ա:

մ. Աստուածածին մայր եւ կոյս, լեր¹ ապաւէն մեր եւ յոյս, որ ընտրեցար ի հոգոյս ծաղող մարդկան զանանց լոյս, եւ ծնար փրկիւն² մեր զՅիսուս³, զոր վկայեաց Ստեփանոս. մարմնացելոյդ առ ի քէն բարեխօսեալ⁴ վասն մեր:

Ով տիրածին⁵ սրբուհի, Աստուածամայր թաղուհի, երկնից զչխոյ

1. լեր] միշտ 2: 2. զփրկիւն ՈՁ: 3. յիսուս Զ: 4. բարեխօսեալ Ո: 5. տիրածին] տիրամայր Ո:

պանծալի, լուծիչ երկանց Եւայի, այսօր ի տօնս ըզձալի եւ նոյն նախալկա-
յին. մարմնացելոյդ:

Այսօր ի տօնս հանդիսի մարտիրոսին առաջին⁶ սարկաւազին զովելի⁷,
առաքելոցն անտեսի պսակ անուն վկայի ցանկալոյն Ստեփանոսի. մարմ-
նացելոյդ:

6. առաջի Ո: ~ առաջնոյ մարտիրոսի 2: 7. ~ զովելոյ սարկաւազի 2:

ՇԱՐԱԿԱՆՔ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐԶԻ

2 Ձեռ. ք. 191բ: Այս պարականոն շարակա-
նին առաջին չորս տուները հրատարակուած են
(Ամա. էջ 79), նորութիւն են այս երկու տուները:

ԴԶ. Ի Հօրէ զարդարեալ: Ի յՈրդւոյ առաքեալ: Ի Հոգւոյն ընտրեալ:
Բաղմաչարչար նահատակ:

Ի վիրապն ընկեցեալ երեքտասան ամօք պահեցար կենդանի, եւ աղօ-
թիւք զՀայր հաշտեցուցեր. մեղուցեալ որդւոց միշտ բարեխօսեա:

Ելանելով քո ի խորոց զհարուածեալն ի զիւական ախտէն բժշկեցեր,
եւ լուսաւորեցեր զՀայաստան աշխարհս. մեղուցեալ:

* * *

Դ. Ձեռ. ք. 114բ:

ԴԶ. Վ. Անճառելի շնորհօք տուաւ զաւակ Թադէոսի մեծ Թադաւորին,
որով յառաքելական յաթոսն կոչեցար, տէր սուրբ Գրիգոր, հայր եւ հո-
վիւ աղբաց եւ ազանց. օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմք:

Բաղմաղէմ հարչարանօք նահատակեալ յերկրի վշտօք եւ զելարանօք,
իջանելով ի վիրապին վերաբերեալ զաղղս Հայաստանեայց ի լոյսն անսուեր
երանելի, տէր սուրբ Գրիգոր, հայր:

Գերազոյն քան զընութիւնս հրեշտակաց եւ սերովրէից, զհարուածեալ
արքայն Հայաստանեայց ի կերպարանս մարդկայինս նորաստեղծեալ հաս-
տատեցեր, երանելի:

ՇԱՐԱԿԱՆ ՍՐԲՈՅՆ ՅԱԿՈԲԱՅ ՄԾԲՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ

2 Ձեռ. ք. 25բ, Է Ձեռ. ք. 281բ, Ժ Ձեռ. ք. 323ա:

ԳԿ. Ով սուրբ Յակոբ անմարմնոց հաւատար, ի յերկրի ծաղեցար որ-
պէս ջահս լուսափայլ. առ Քրիստոս բարեխօսեա շնորհել¹ զառողջութիւն
բժշկութեան:

Բախճան հաւատոյ եւ բերկրումն սիրոյ, առիթ շնորհաց եւ պարգեւա-
տու առատ ողորմութեան. առ:

Ի Թեւ Հոգւոյն հոգւով վերացար, առեր իշխանութիւն ի վերայ հար-
ուածոց զիւաց². առ Քրիստոս:

1. շնորհելով էձ: 2. զիւաց] բժշկութեան էձ:

ՄԵԾԱՑՈՒՍՅԷ ՍՐԲՈՅ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ

Ո Ձեռ. ք. 117բ, 2 Ձեռ. ք. 197ա:

ԴԿ. Աստուածածին անարատ, յերկրի յայտնեալ ճառագայթ, մարգա-
րէիցն յաղբերաց, յառաքելոց զետընթաց. զքեզ մեծութեամբ վերօրհնեմք
Աստուածածին զաւանիմ:

Ձանճառ ծնունդ Հօր, զոր ոչ պատուեն¹ միտք հոլով², զու ուռկա-
նեալ³ յարգանդի ծնար փրկիչ աշխարհի. զքեզ մեծութեամբ վերօրհնեմք:
Նոյեան տապան եւ տաճար, արրահամեան տաղաւար, զԱստուածն Բան
նկալար եւ առ ի քէն մարմնով ծնար⁴. զքեզ մեծութեամբ:

Աստուածածին սուրբ տախտակ, զորոյն սքանչելի⁵ ընդունակ, օրհնեմք
զքեզ մայր կենաց, ընդ Ղեւոնդեանց եւ վարդանանց⁶. զքեզ մեծութեամբ:

1. պատուեն] բաւեն 2: 2. հոլով] ճառել 2: 3. ուռկանեալ] պարփակեալ 2: 4. բան... ծնար]
մարմնով անուցեր կաթամբ զնա զիւցուցեր 2: 5. սքանչելի 2: 6. օրհնեմք... վարդանանց]
որ ետ զօրէն աւետեաց ժողովրդեանն զոր փրկեաց 2:

ՇԱՐԱԿԱՆ ՍՐԲՈՅ ԹԱՐԳՄԱՆԶԱՅ

Ժ Ձեռ. ք. 306բ, Բէւ հրատարակուած է
(Ամա. էջ 139), սակայն Ս. Ղազարի օրինա-
կէն տարբեր ըլլալով, միասին կը դնենք եր-
կուքը՝ տարբերութիւնները շեշտելու համար:

Ըստ Ս. Ղազարի օրինակին

Ըստ Ս. Ամատունիի

ԴԶ. ՈՂ. Յնծացէք այսօր աղղ եւ աղինք
ամենայն, ի յիշատակի սուրբ վարդապե-
տացն, որք պայծառացան լուսովն երկ-
նային:

Յնծացեալ բերկրեցան ի փառս Որդւոյն
Աստուծոյ, եղեն զօրաւորք ի պատերազ-
մի, զիշխանն անօրէն ի միջոյ բարձին:

Անմարմնացեալք ի մարմնի հրեշտա-
կալրօն առաքինութեամբ, զարդարեցին
փառօք սուրբ զեկեղեցի, եւ եղեն քարոզ
Որդւոյն Աստուծոյ:

ԴԶ. Իք. Յնծացէք այսօր աղղ եւ աղինք
ամենայն, ի յիշատակի սուրբ վարդապե-
տացն, որք բարեխօս են առ Տէր վասն
մեր:

Յնծացեալ բերկրեցան ի փառս Որդ-
ւոյն, եղեն պսակեալք յանստուեր լու-
սոյն, եւ զասեցան ի զասս վերին զը-
ւարթնոց:

Անմարմնք ի մարմնի հրեշտակերպ
առաքինութեամբ, եղեն զօրաւորք ի պա-
տերազմի, զիշխանն անօրէն ի միջոյ
բարձին:

ՇԱՐԱԿԱՆ ՍՐԲՈՑ ՍՈՒՔԻԱՍԱՆՑ ՔՕՇԻՑ

Զ Ձեռ. ք. 262բ-263ա:

ԴՁ. Այսօր տօն է կեղեցի ուրախութեամբ զխիշատակ սրբոց Սուրբիսանց, որք նախահրաւէր կոչմամբ Հոգւոյն ընտրեցան ի յԱստուծոյ լուսաւորիչ տանն թորդոմայ. աղաչանք սոցա կեցո զմեզ, Քրիստոս թաղաւոր:

Այսօր ծնեալք աւագանաւն յորդեգրութիւն Հօրն երկնաւորի ի ձեռն Ոսկեանց քահանայիցն ի յակունն Եփրատայ ի ծաղկաղարդ վայելչութիւն. աղ:

Այսօր զխաւար մեղաց հոգւոց փարատեցին յանձանց իւրեանց, տաճար կաղմեալ Հոգւոյն սրբոյ եւ բնակարան բանին Աստուծոյ. աղ:

Այսօր բարձեալ զլուծ կենաց ըստ հրամանի փրկչին մերոյ, զուարթնոց երկնից նմանեցին, մարմնով ճգնեալք ի փորձ հանդիսի. աղ:

Այսօր զօրացան օրինաց խաւարասէր բռնաւորաց եկեալ հասին ի Հայաստան, ծարաւիք արեան սրբոցն, որք բնակեցան ի Սուկաւէտ. աղ:

Այսօր զիմեալ յօժարութեամբ որպէս գառինք ի մէջ գայլոց, ըմպել զբաժակ չարչարանաց եւ մկրտեցան արեամբ իւրեանց. աղաչ:

Այսօր վկայք հաւատարիմք եւ կամարարք կամ (sic) Յիսուսի ետուն զանձինս ի մահ խաչի եւ պսակեցան յանմահ արքայէն. աղ:

Այսօր ծածկեալ զանձն կենաց մաքուր նշխարք երանելեաց ի ձեռն սուրբ թաղաւորին վերացողեն զցօլ շնորհաց բուժիչ ախտից հոգւոց մարդկան. աղաչանք:

ՇԱՐԱԿԱՆ ՍՐԲՈՑՆ ԿՈՋՄԱՅԻ ԵՒ ԴԱՄԻԱՆՈՍԻ

Բ Ձեռ. ք. 219ա:

ԲԿ. Բժիշկ հոգւոց եւ մարմնոց փրկիչ Տէր Յիսուս Քրիստոս, զվկայան այսօր պսակեալ զկոսմաս եւ զԴամիանոս:

Զի զկեանս ընդ քեզ փոխարկեալ, անանց կենաց ցանկացեալ, զաշխարհս եւ զինչս ուրացեալ, յերկրի երկնայինք ցուցեալք:

Բժիշկ էին մարմնականք զհոգւոց բժիշկի ընկալան, ի քէն ուսան ճոխացան եւ մեզ փրկիչք շնորհեցան:

Սոցին սուրբ աղաչանք շնորհօքն բժշկանք զհիւանդացեալքս մեղօք, քաւեա անվարձ փրկանք:

Հայցմամբ սուրբ Աստուածածնին անախտ զքեզ ծնողին, զերծո Որդիդ միաժին զհիւանդքս յախտից մարդկային:

ՇԱՐԱԿԱՆ ՍՐԲՈՑ ԿՈՒՍԱՆԱՑ

Զ Ձեռ. ք. 46ա:

ԲԿ. ՎԿ. Երանելեացն մտաց հանդիտացեալք, սուրբ կուսանք, որք մարբութեամբ գերազանցք քան զլուսաւորս էք երկնից. լերուք ընդ մեզ մաղթակիցք, զի ընդ ձեզ լիցուք զասակիցք:

Տկար բնութեամբ զոյացեալք մարմնոյ զիւրին աշխարհիս զչարժմունս, զհնարս եւ զպատրանս զօրեղապէս վանեցիք. լերուք:

Զկնի գառինն անմահի հետաշրջիք, ով կուսանք, ձեօք յաղթական դասն երկնից նոր օրհնութեամբ զուարճանայ. լերուք:

Խորհրդական դուք ցօղով զրիժ մեր մեղաց լուացէք, զի լապտերօք ընդ առաջ մաքուր սրտիւ Տեառն ելցուք. լերուք:

ՇԱՐԱԿԱՆ ՍՐԲՈՑ ԶԳՆԱԻՈՐԱՑ

Ռ Ձեռ. ք. 21ա:

ԴՁ. Որ զանմարմնոցն ի մարմնի տպաւորեցեր երանելոյն ի հարս սրբոյն Պողեայ, այսօր տօնեմք զխիշատակ ճգնաւորին քո. աղաչանք սորա կեցո զմեզ, փրկիչ:

Որ զտանջանս յաներեւոյթ թշնամոյն ի յանձն էառ երանելին ի հարս սուրբ Մակար, կոխելով զզօրութիւն թշնամոյն. աղաչանք:

Որ յանպատում ճգնութեան համբերեաց երանելին սուրբ Նեղոս, փոխեցաւ այսօր ի կարգս հրեշտակաց. աղաչանք:

Որ զերկնայնոց անյաղթութիւն յինքեան տարեալ ժուժկալութեամբ եւ

րանելին ի հարս սուրբ Սրապիոն, վերափոխեցաւ այսօր ի դասս անմարմնոց. աղաչանք:

Որ քաջութեամբ նահատակեալ վանեաց զթշնամին սուրբն Յովհան, փոխադրեալ այսօր ընդ յաղթող նահատակսն. աղաչանք:

Կենդանի մեռելութեամբ ճգնեալ անարատ վարուք երանելի հայր Կենդանի մեռելութեամբ սորա բարեբանեցուք զթաղաւորն անմահ:

Սուրբն Աբրահամ, յիշատակաւ սորա բարեբանեցուք զթաղաւորն անմահ:

Որ հրեշտակացն արթնութեամբ քաղաքավարեալ ի մարմնի երանելին ի հարս սուրբն Եւագրի, այսօր ի կարգ վերին զօրացն զօրացեալ հոգւով:

Եւագրի յիշատակաւ:

Եղէք ժառանգք հաւատոյ ճշմարտութեամբ երանելի սուրբ հարք յաշխարհի, մաղթելով հայցեմք ի ձերոց ճգնութեանց, բարեխօս լերուք առ Տէր վասն անձանց մերոց:

Հետեւեալ երկու շարականները առած ենք Զմմառի քիւ 420 Ձեռագրէն, ք. 280ա-281ա: Առաջին շարականին սկզբնատաւերն են Կոստանտին:

ՄԵԾԱՑՈՒՍՑԷ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ԴՁ. Կեփայեան հիմամբքն, շնորհադորձ տաճար, որ զտիրականն աթոռ ի Հօրէ առաքեալ ի քեզ թաղուհի օծար, այսօր մեծացիր հարսնացեալ եկեղեցի մօր Բանին սուրբ քո:

Սրբաբաւ զօրութեամբն զէութիւնն որ ի Հօրէ առաքեցաւ, այսօր ըղ-

նախնոյն արտակրեցար քեզ եղանակին տիրուհի բերկրեալ մեծացիւր խորան
Բանին Հօր որ ետ:

Առ Սարեկալ զգառնազէն նուիրեալ երկիրն որ քեւ ծանեաք նուիրեալ
զչնորհն անապական ճաշակամբ Բանին ի քէն ընկալաք աստուածային տըն-
կեալ թաղուհի բուրող զհամ Հօր զինւոյն:

Տօնակցիմք եւ մեք այսօր տաճարաւս երկնից ընդ հրեշտակացն որ ի-
ջանեն ի յերկնից յերկիր, ի սանդուխք նահապետին որ մեզ ետես զհաստա-
տեալն ի քեզ հարսնարան եւ հարսն մեզ Աստուածածին:

Նուազեալ Բանին զքեզ փողն որ յաստուածուստ մեզ ձայնակցեցան ըզ-
կուսական կիրքն (sic) որ ցուցաւ ի Հողուոյն ի քեզ, բազմելով ի քեզ փեսայն
Աստուած միշտ ընդ մեզ այսօր քո ծնեալքս ծծամբ ստեանցդ քո միշտ ի
մէնջ օրհնիս:

ՇԱՐԱԿԱՆ

Աստուածային ընթացիւք հետեւեալ կենարարին ի տունն Զաքէի մաք-
սապետին անսուտ բանին որ ասէր, այսօր եղեւ փրկութիւն տանս աշամիկ.
արդ նոյն օրհնութիւն եւ նոյն շնորհ եկեացէ եւ հանդիցէ այսօր ի տունս յայս
եւ ի բնակիչ սորա:

Խոստումն Արքաճամու զոր խոստացար Աստուած, խոստո. կրկ. ասէ
ի զաւակէ քումմէ օրհնեացին ամենայն ազգ երկրի. արդ նոյն:

Զայն աւետեաց լինէր ամլոյն Սառայի, ձայն աւ. կրկ. ասէ ի սոյն
աւուրս եկից եւ եղիցի որդի Սառայի. արդ նոյն:

Մարգարէութիւն Աննա պաղատէր լռելեայն առաջի Տեառն, եւ լռեալ
ի քահանայէն Հեղիա ծերունոյն, ասէ Տացէ քեզ Տէր զխնդրուածս քո եւ
եղիցի ի քէն զաւակ առն քո. արդ նոյն:

Երգակցեալ եւ մեք այսօր ընդ սրբոցն դասն, զոհութիւն մատուցանե-
լով փրկչիդ բոլորից, զի արժանի արասցես զմեզ ձայնակից լինել սրբոցն ի
լոյս, եւ ընդ նոսին մատուցանել փառս սուրբ Երրորդութեանն յաւիտեանս.
ամէն:



ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻՆ ԻՐ ՆՈՐԱՅԱՅՏ ԵՐԿԵՐԻ ԼՈՅՍԻ ՏԱԿ

ԳՐԵՑ՝ Յ. Ս. ԱՆԱՍԵԱՆ

(Հայաստանի Գիտ. Ակադեմիայի Պատմութեան Հիմնարկէն)

ԺԲ/ԺԳ. դարերում ապրած Վարդան-
ների ինքնութեան հարցը՝ հայ մատենա-
դրութեան կնճռոտ հարցերից մէկն է:
Յիշատակում են՝ Վարդան Հաղբատա-
ցի, Վարդան Արեւելցի, Վարդան Բար-
ցի, Վարդան մականուն ունեւ Վարդաններ,
որոնց անուններով դրական
Վարդաններ են հասել մեզ: Այս
բազմաթիւ երկեր են հասել մեզ: Այս
անձնաւորութիւնների ինքնութեան, այս
կամ այն Վարդանի նոյն կամ տարբեր
լինելու, ինչպէս եւ Վարդանների անուն-
ներով հասած երկերի հեղինակութիւննե-
րի ճշտման հարցում՝ մեծ անորոշութիւն
է տիրում մինչեւ այսօր: Բայց անցեալ
է տիրում մինչեւ այսօր: Ն. Մառը Վար-
դանների հարցի ուսումնասիրութեան
դրածում ձեռք բերեց անառարկելիօրէն
դրական մի արդիւնք, յայտնաբերելով
դրական իր սեփական անունով մին-

չեւ այդ անձանթ մնացած մի նոր Վար-
դանի, որ է Վարդան Այգեկցի, ապացու-
ցելով, որ արդէն յայտնի առակներ չե-
ղինակ Վարդանը նա է: Գրականութեան
մէջ Վարդան Այգեկցին երբեմն անուն-
ւում է նաեւ Վարդան Մարաքացի:

Յայտնի է, որ Վարդան Այգեկցու թո-
ղած դրական ժառանգութիւնը կազմում
են հիմնականում առակներ, խրատական
ճառեր (քարոզներ), խրատական ու կրօ-
նարարական թղթեր եւ աղօթքներ: Քիչ
յետոյ կը տեսնենք, որ նա իր զրչով կա-
պուած էր նաեւ իր ժամանակի դաւանա-
բանական վէճերին:

Վարդան Այգեկցու կենսագրութեանը
վերաբերող տեղեկութիւնները մինչեւ
այժմ սկսւում էին միայն 1212 թուա-
կանից, երբ նա Այգեկի անապատում² ա-
ւարտել է իր խրատների այն ուրոյն խմ-

տարբեր օրինակներում եղած յիշատակարան-
ների համեմատութիւնից երեւում է, որ Այ-
գեկի անապատը գտնւում էր Դոսիս (Տաւիս)
կոչուած ձորում, իսկ Այգեկն ու Դոսիսը գտնու-
ում էին այսպէս կոչուած Սուրբ Լեւոնե-
րում, որոնք աւելի են յայտնի Սեւա Լեւոնե-
րում:

ա. «Զոր ողորմութեամբն Աստուծոյ յար-
մարեալ շինեցի ողորմելիս Վարդան, ի չոր-
րորդ ամի գալստեան մերոյ ի Մարաթա[յ]ո
ի Սուրբ լերինս՝ յԱյգեկս» (Պետերբուրգի
Ասիական Թանգարանի հայերէն ձեռագիր.
Հմմտ. H. MAPP, I, 302):

բ. «Զոր ողորմութեամբն Աստուծոյ շինեալ

1. H. MAPP, «Сборник притч Вардана; материалы для истории средневековой армянской литературы», т. I—III, С. — Петербург, 1894—1899. Հ. 8. ՏԱՇՆԱՆ, Ժողովածոյ առակաց վարդապետ. Նիւրնբերգի պատմութեան Հայոց միջնադարեան մատենագրու-
թեան ըստ հայագետ Ն. Մառի, Վիեննա, 1900:
2. Այգեկի տեղը յայտնի է: Ն. Մառը ենթա-
դրում էր, որ Այգեկը «եթէ հենց Սեւա Լե-
ւոնի վրայ էր, յամենայն դէպս մօտակայ մի
տեղ էր» (H. MAPP, I, 300): Այժմ կարելի
է հաստատօրէն ասել, որ Այգեկը Սեւա Լեւոնի
մասերում էր գտնւում: Վարդանի «Բանք
վասն տասն համարոյ» աշխատութեան երկու